



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338·4
4-57

17 FEB 2010

CA 2484

338.4

U-57

Գ. ԱՆԻՑՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԲԱՅԼՇԵՎԻԿՈՐԵՆ
ՀՈՒԾԵԼ ՄՍԻ ՊՐՈԲԼԵՄԸ

ՊԵՏՐՈՎԱ

1931

ՑԵՐԵՎԱՆ

338.4

U-57

**ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՅԵԶ և ՄՆՋԱՎ
ԲԱՅԼԾԵՎԱԿԱՅԱՆ ՏԵՄՊԵՐԻՑ**

Վերջերս շատ են խոսում անասնաբուծության զարգացման մասին, նրա ռեկոնստրուկցիայի (վերակառուցման) մասին։ Յեզ դա իր հիմնավոր պատճառներն ունի։ Խնդիրն այն է, վոր ժողովրդական տնտեսության համարյա բոլոր ճյուղերում հսկայական նվաճումները ունենք, բայց անասնաբուծության ասպարիզում խիստ յետ ենք մնում։ Կարելի յետ աւել, վոր ամեն որ, ամեն ժամ աճող մեր տեքստիլ արդյունաբերությունը բուրդ է ուզում, կաչեղործարանները մեծ քանակությամբ կաշի յեն ուզում, բանվորների ու աշխատավոր գյուղացիների նյութական դրությունը լավանում է, և նրանք այժմ յուղի, պանրի, կաթի, մսի ավելի շատ պահանջ ունեն։ Իսկ այդ բոլորի գիմաց մենք անասնաբուծության ասպարիզության շափականց ցածր տեմպեր (թափ) ունենք։ Յեթ վերցնենք ամբողջ Խորհրդային Միության անասնաբուծությունը և համեմատենք 1916 թ. հետ (16 թվին 100 ընդունելով), կստանանք հետեւյալ պատկերը՝

Տարիներ	Զինք	Խոշոր լեղջ. անասնաներ	Այծ և վոչխար	Խոզեր
1927 թվին	99 առև.	114 տոկոս	119 ա.	111 ա.
1928 թ.	94 >	118 >	126 >	126 >
1929 թ.	97 >	115 >	128 >	108 >
1930 թ.	89 >	89 >	87 >	60 >

Ավելի անմթիթար պատկեր և ստացվում անասնաբուժության ապրանքային արտադրանքի, մանավանդ մարդի ու ճարպի տեսակետից։ Յեթե ընդունենք յուրաքանչյուր տարվա մասի և ճարպի ընդհանուր արտադրանքը վորպես հարյուր, ապա մասի և ճարպի ապրանքային արտադրանքը 26 թվին կկազմի 33 տոկոս, 27 թվին՝ 32 տոկոսից մի քիչ ավելի, 1928 թ.- 31 տոկոսից են ավել, իսկ 29 թվին՝ 29 տոկոս (ընկ. Ստալինի գեկուցումից)։

Մի ուրիշ հաշիվ անենք։ 1929 թ.- գարնանից մինչև 30 թվի գարունը ԽՍՀՄ-ում խոշոր յեղջուրավոր անասունները պակասել են մեկ հինգերորդ մասով, կողերը՝ մեկ ութերորդով, վոշխարները՝ մեկ յերրորդով և խողերը՝ յերկու յերրորդով։ Այսպիսով, ինչպես ընկ. Ստալինն ե ասում, «ստացված են անառարության անկայունության ու տնտեսական անվտահելլության նշաններ»։

ԱՐԱՆՈՒՄ ԵՆ ԱՐԱԳ ԶԱՐԳԱՆՈՒԹԻ ՆԱԽԱԴՅԱՅԱՆՆԵՐԸ


Յեթե մենք այսուեղ կանգ առնենք, դուրս կգա, վոր մեղ մոտ ընդհանրապես դրությունն անհուսալի յե։ Այդպես միայն մտածում են մեր գժվաբություններից նվազող և հռուանկարները կորցրած աշերը։ Յեկեք հարցին մի ուրիշ կողմից նայենք։ Ամենից առաջ չնայած վոր անասունների թիվը վերջին տարում մի քիչ կրճատվել է, առաջան վոշ վոշ չի կարող ժխտել, վոր մեր անասնաբուժությունը բավական խոշոր քայլերով սուած և գնացել։ Ինչ հետզհանում անցնում ենք

անասնաբուժության ավելի բարձր ձևվերի, ավելի կուլտուրական ձևվերի։ Ո՞ւմ հայտնի չե, վոր պետությունը հսկայական ըանակությամբ կատարելագործված գործիքները ու մեքենաները (սերզատներ, մեքենա-խնոցինոցներ և այլն) և տալիս գյուղերին, հարյուրավոր պանրի ու յուղի գործարաններ և կառուցուցում, խոչոր չափերով լայնացրել և ցանովի խոտերի, ճակնդեղի ցանքերի տարածությունները, կառուցվում են նոր, շվեյցարական տիպի գոմեր, անասունների ցեղերն աղնվացնելու համար բեղմնավորման կայաններ են հիմնվում և այլն։ Իսկ այս բոլոր միջոցառումներն զգալի վոփոխություններ են մտցնում անասնաբուժության մեջ, նրանց դուռմ են ավելի բարձր աստիճանի վրա և նրա զարգացմանը խթան են հանդիսանում։

Սակայն անասնաբուժությունն առաջ շարժելու համար հիմնական ուժը կուեկավի և խորհրդային տընտեսություններն են հանդիսանում։ Դրանց լայն ծավալումով և, վոր կուսակցությունը հաջողությամբ լուծեց հացահատիկի խնդիրը։ Հենց դրանով ել ստեղծվեց մեր հարցը լուծելու հիմնական նախապայմանը, վորովհետեւ, ինչպես ընկ. Ստալինն ե ասում, հացը հիմնական ողակ և բանալի յե հանդիսանում գյուղանուեսության մյուս բոլոր խնդիրների լուծման համար։

Այդպիսով հսկայական չափերով զարգացող մեր արդյունաբերությունը, խորհրդային և կոլեկտիվ տընտեսությունները և հացը հանդիսանում են այն ամուր ու հաստատուն հիմքը, վորի վրա ուժեղ քափով զարգանալու յե անասնաբուժությունը։

60542-67
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՀ Բիблиոթեկ
ՀԱՅ-ԱՐՄ. ՀՀ
ՀԿ. Ա. ՄԱՆՈՒԿԻAN
ՍԵՐԱՆ Ա. ՄԱՆՈՒԿԻAN



ՀԱՅԱՍՏԻԿԱՅԻՆ ՊՐՈՊԼԵՄԻ ԼՈՒՇԱՆ ՓՐՈԳՐԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Բայց հարցն այն ե, թե ի՞նչ ուղղությամբ պիտի զարդանա անասնաբությունը: Չե՞ վոր մենք ամեն տեսակ զարդացման կողմնակից լինել չենք կարող: Զարդացում կա, վոր դեպի կապիտալիզմ ե տանում, զարդացում ել կա, վոր դեպի սոցիալիզմ ե տանում:

Ահա այսուել ե, վոր մեր կուսակցության և աջ ողորտունիսամների ճանապարհները ջոկվում են: Իհարկե չպիտի կարծել, վոր աշերը կապիտալիզմի վերականգնման կողմնակից են: Վո՞չ, այդպիսի բան չկա: Նրանք իրենց հաշվով ավելի «ուղղափառ» լինինիստներ են, քան բայլչեվիկյան կենակոմը, քան ընկ. Ստամենը: Բայց նրանք ուզում են մեր ժողովրդական տընտեսությունը տանել այնպիսի ճանապարհով, վոր այդ ճանապարհն անկախ իրենց ցանկությունից դեպի կապիտալիզմ ե տանում: Որինակ՝ հացահատիկի հարցը լուծելու համար նրանք առաջարկում ելին թույլ տալ անհատական տնտեսություններին (վորոնց թվում նաև կուլակներին) աղատ հարստանալ: Նրանք կողմնակից չելին կուլակի վրա արշավանքն ուժեղացնելուն, վորովհետև, նրանց կարծիքով, կուլակին տրնտեսապես խեղղելով մենք իրը թե յերկիրը սովոր մեջ կդցենք (վորովհետեւ կուլակը բավական հացահատիկի հարցը):

Ի՞նչ դուրս կդար, վոր կուսակցությունը կատարեր աշերի առաջարկը: Ամենքի համար ել պարզ պիտի լինի, վոր դրանից կուլակությունը կուժեղանարձեծ չափերով: Ունենալով իր ձեռքին խոշոր տնտեսու-

թյուն և ահապին քանակությամբ հաց, դրանով կուլակությունը կը այլայն չը կալի մասամերին (ինչպես քայլայում եր մինչև հեղափոխությունը) և նույնիսկ բոյկոտ կհայտարարեր խորհրդային իշխանության ու հաց չեր տա (այնպես, ինչպես վոր 27—28 թվերին հացը պահեց և մեղ դժվարությունների մեջ գտեց): Իսկ դա ո՞ւր կտաներ: Դա՝ դրսի կապիտալիստների աշակցությամբ կտաներ դեպի կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում:

Իհարկե վոչ մեր կուսակցությունը և վոչ ել բանվորներն ու չքավոր գյուղացիները կործանարար այդ ճանապարհն ընտրել չեյին կարող:

Կուսակցությունն ընտրեց խորհրդային և կուեկտիվ տնտեսությունների ուղին: Թե ի՞նչ արդյունքի հասնք, այդ կարեւոր ե մի քիչ ավելի լայն պարզաբանել, վորովհետեւ 16-րդ հասագումարը վարչեց, վոր անասնաբուժության հարցը (պրոբիեմը) նույնպես պետք ե լուծել հացահատիկային հարցը (պրոբիեմի) լուծման փորձալած ձեվերավ: Մենք ի՞նչպես լուծեցինք հացի հարցը:

15-րդ համագումարի վորոշման համաձայն կազմակերպեցինք խոչըր հացահատիկային գործարաններ (խորհրդային տնտեսություններ), վորոնք 1927-28 թվին տվին $9\frac{1}{2}$ միլիոն ցենտներ²) հացահատիկ, 27-28 թվին 12 միլիոն 800 հալաբ ցենտներ, անցյալ տարի՝ մոտ 28 միլիոն ցենտներ (108 միլիոն փութ), իսկ այս տարի կտան 71 միլիոն ցենտներ կամ 370 միլիոն փութ հաց:

²⁾ Մեկ ցենտները 6 փթից ավելի է:

Կոլտնաթեսությունները 1927 թվին արտադրեցին 4,900 հազար տեսակի հաց, 28 թվին 18 և կես միլիոն, 29 թվին՝ 29 միլիոն, իսկ 30 թ.՝ 250 միլիոն տեսակի հաց էամբ 1500 միլիոն փութ, վորից մոտ 500 միլիոն փութը Հանձնեցին պետությանը։ Կոլտնաթեսությունները, վոր 27 թվին մի միլիոն հեկտար ել ցանք չունեցին, այս տարի ունենալու յեն 66 միլիոն հեկտար ցանք 1930 թ.՝ 40 միլիոն հեկտարի դիմաց։

Այսպես ե հաղթանակում կուսակցության ինքնառն քաղաքանությունը։

Այս փորձված ճանապարհով—խորհանակությունների ու կոլտնաթեսությունների ճանապարհով—1930 թ. կուսակցությունը վճռական կերպով ձեռք դարձեց մսի (անասնաբուժության) խնդրի լուծմանը։

Մի տարի յեն, վոր կուսակցությունը ձեռնարկել ե Հացահատիկային Փարբիկաներ նման անասնաբուժական Փարբիկաներ Հիմնելու գործը և ահա թե արդ կարծ ժամանակում ինչ արդյունք ե ստացել։

1930 թվին 128 Փարբիկաներ են կազմակերպվել—1 միլիոն 12 հազար գլուխ խոշոր յեղջյուրավոր անասնաներով, 116 տնտեսություն—2,680 հազար վոչխարով, 308 տնտեսություն՝ 1,770 հազար գլուխ խոզերով։

Կոլտնաթեսությունների անասունների թիվը նույնապես արագ աճում է։ Ամբողջ յերկրի անասունների հետ համեմատած՝ կոլտնաթեսությունների ձիերը 28 թվին մեկ տոկոսից ել ելին պակաս, 29 թվին 2 տոկոսից պակաս, իսկ 1930 թվին 17 տոկոսից ավելի։ Կովերը 28 թվին կես տոկոսից պակաս ելին, 29 թվին մեկ տոկոսից պակաս, իսկ 30 թ. վեց և կես տոկոսից ավելի (չպիտի

մոռանալ, վոր այս աճումը մեծ մասամբ կոլեկտիվների ցանցի և անդամների թվի աճման հետեւանքն է)։

Կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների անասունների այլպիսի աճումն ապահովում է անասնաբուժության խնդրի արագ ու վճռական լուծումը։ Այսպես վոր արդյունաբերական կենտրոններին կանոնավոր միս մատակարարելու հարցը կլուծվի հենց այս տարի։ Բավական ե հիշատակել, վոր Համ Կ. (բ) Կ. Կենտրոնի գեկտեմբերյան (1930 թ.) պլենումի վորոշմամբ այս տարի միայն խորհրդանտեսությունների խոշոր յեղջյուրավոր անասունների թիվը են չեն չեմ հասնելու յե 2,800 հազար գլուխ, խոզերի թիվը՝ մեկ միլիոն 900 հազարի, իսկ վոչխարների և այծերի թիվը՝ 4,400 հազար գլուխ։ Դրա հետ միասին այս տարի կոոպերացիայի գծով ֆաղաքամերձ խոշոր տնտեսություններն ու մյուս խորհանակություններն ունենալու յեն 388 հազար գլուխում յեղջյուրավոր անասուններ, 218 հազար վոչխար և 456 հազար խոզ։

Դրան ավելացրեք հսկայական թափով աճող կոլտնաթագումը, վորն այս տարի ընդդրկելու յե Խորհրդային Միության գյուղացիության առնվազն կեսը, և պարզ կլինի, թե ինչպիսի վիթխարի դործերի, ինչպիսի հսկատառուն ու հիմնական միջոցների յե ձեռնարկել կել կուսակցությունը անասնաբուժությունը զարգացնելու համար։ Այդ ձեռնարկումներով մեղ կհաջողվի կարծ ժամանակում կուսակցին միսը վորխարինել (և շատ ավելի գերազանցումով) խորհանական և կոլտնաթագական եժան մսով, ինչպես կարողացանք կուլակային հացը վորխարինել (և առաջ անցնել) կոլտնաթական հացով։

ԱՐԵՆԱ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿՈՒԼՈՎԻ ՅԵՎ ՆՐԱ ԱԳԵՆՏՆԵՐԻ ԴԵՄ

Այստեղ յեկեք մեկ ել Հիշենք այն մարդկանց, վորոնք կախ են ընկնում մեր հզոր շարժման պոչից, և աղապատառ դեմ են դուրս դալիս կոլանտեսությունների և խորհունտեսությունների շարժման խոկական բայլ-շեմիլյան տեմպերին և իրենց թելի տակն են առնում կուլակներին, նրանց, ովքեր վոչ մի միջոց չեն խնայում խորհրդային իշխանության բոլոր ձեռնարկումները խափանելու համար, նրանց, ովքեր հրդեհում են կոլտնտեսությունների գույքը, սպանություններ են կատարում և ի՞նչ ստոր միջոց առես չեն դործադրում մեր հաղթական առաջխաղացումը կանոնեցնելու համար:

Հենց թեկուղ վերցնենք նրանց (կուլակների) կատարած վիճակար դործն անասնաբուծության ասպարիզում: Մենք վերև տեսանք, վոր անասունների թիվը վերջին տարիներս վորոշ չափով կրճատվել է: Այդ թվերին նայելով ոպորտունիսար, պինդ մատը դնում են նրանց վրա ու աշխատում են միամիտներին հավատացնել, թե մեր գյուղատնտեսությունը «ղեգրադաշնայի յե յենթարկվում», այսինքն վորպես թե յետ ենում: Աջերը, կուլակի այդ հավատարիմ աղենաները, չեն ուզում տեսնել, վոր անասունների մասնակի կրճատումը դասակարգային պայքարի արտահայտություններից եւ և վոր այստեղ հիմնական դեր կաարեցին ժեր դասակարգային թշնամիները: Նայեցեք վերեվ բերված թվերին. դուք նկատում եք, վոր անասունների կրճատումը կատարվում է 1929 թվից մինչև 30 թվի

կարսումը: Հայտնի յե, վոր ամբողջ անցյալ յերկու տարրին (29 և 30 թ.) կուլակի վրա ամբողջ ֆրոնտով հարձակում դործելու և կոլտնտշարժման վիթխարի անման տարիներ եյին: Կուլակությունը գրոհի յենթարկելով դժերով, ամեն տեսակ կույր ու կարճատես ոպորտունիսարներից տաս անգամ ավելի լավ ե տեսնում, վոր կոլտնտշարժումը միլիոնավոր աշխատավորներ առնելով իր մեջ, հետզհետե քանդելով մասնավոր սեփականատիբության սահմանները, արմատահանե անում իրեն (կուլակությանը) և վերացնում է վորովին դասակարգ: Մենող կուլակությունը գաղաղած ծառա և լինում, ուժեղացնում է հուսահատ դիմադրությունը, աշխատունների կոտորածը վոր սարքեց կուլակությունը, այդ դիմադրության ձեվերից մեկն է: Մորթելով, ծախծիկելով իրենց անասունները՝ կուլակները պրովոկացիաներ են տարածում, թե կոլտնտեսությունները խլելու յեն բոլոր գյուղացիների ամբողջ ունեցվածքը, և «բարեկամաբար» խորհուրդ են տալիս չքավորներին ու միջակներին, վոր նրանք ել ծախծիկն ու մորթուտեն անասունները:

— Գոնե մի քանի որ տաք կերակուր կուտես, հարեան, ինչո՞ւ յես թողնում անասուններդ զուրդուղուցի փայլին, մորթիր քեֆ արա, աշխարհից ի՞նչ ես տանելու, — խրատում ե կուլակը գյուղում, պատերի տակ և ամեն տեղ:

— Վո՞ր քուչովն անց կենայիր, դավուրմայի հոտ եր դալիս, — պատմում են Պողոս-քիլիսեցիք, — տուն չկար, վոր ամեն որ միս չուտեր. Խորովածի հոտը գեղդը բռնել եր, հենց մարդ ել կար, վոր գիշերը միշը

տանում պահում եր գոմում, մեկն ել մինչև անգամ ժխջ թաղել եր, վոր չբռնեն, ու քիչ-քիչ հանում ու տում եր, կարծես իրեն ապրանքի դուշմանն եր:

— Զանըմ, արածներս ախմախություն եր ելի՛, կուլակը մեր գլխին լավ ուժին ըրեց, լա՞վ... — խոստավանում են խարլած դյուզացիները:

Դրանում համոզվելու համար հերիք և թեկուղ միայն Բասարդեչարի կուլակներից մեկի արարքը հիշատակել, վորը 1930 թվի ընթացքում չարամտորեն փշացրել է 160 վոչխար և 20 խոչոր յեղջուրավոր անառներ:

Եեկ վոր անզբագետ չքավորին ել հարցնես, Բուխարինից ել, Արկովից ել ասս անդամ ամիելի համոզված, ավելի պարզ կասի, վոր անասունների կրծատումը կուլակի սարքած ոլիններն ելին: Բայց այստեղ քի՞ դեր չիմացին նաև 1930 թվի գարնանը, կուլեկտիվացման ժամանակ կատարած սխալները: «Զախ» քյալագյոզները մի «դրբի» մինչև սոցիալիզմ մեկ քշելու տենչով բռնված, շեղվելով կուսակցության դիմավոր գծից, բազմաթիվ գյուղերում վարչական միջոցներով վոչ միայն խոչոր անասունները, այլև նույնիսկ հավերն ու տնային աղավնիները «միացրին»: Դրանից սպավեց դասակարգային թշնամին և հաջողեցրեց անասունների կոտորածը, վորը մեզ շատ թանգ նստեց: Այժմ կուտանտարժման նոր վերելքի հետ միաժամանակ կուլակներին նորից հաջողվել և մի քանի դյուզերում (Զիրուլու, Սեմյոնովկա և այլն) պրովոկացիաների միջոցով ծայր տալ անասունների կոտորածին:

Եեկ այս բոլորից մի՞թե պարզ չե, վոր բոլոր ճակատամասերում կազմակերպված չքավորությունը,

կուտանտականների և միջակների հոգ ժամանելով ավելի ուժգին գրահի պիտի հանել կուլակության գեմ, նրան դուրս քշել մեյզանից և յեւանդուն նախապատրաստել նրա վորպես դասակարգի վերացումը համարած կուլեկտիվացման հիման վրա: Կուլակի վրա այդպիսի արշավանք կատարելու համար մեր կուսկազմակերպությունները, գյուղբնիները և բոլոր խկական կոմունիստները պետք են անինա խիեն, դեն ըստ պրտեն ճանապարհից կուլակին՝ զիջողներին—աջ ու պրոտունիստներին: Միաժամանակ պետք են անողոք խիել նաև «ձախերին», վորովհետեւ նրանք աշերի շվախիկը (ստվերը) լինելով մի այլ ճանապարհով, միջակին խիելով ու մեզանից կուլելով, քյալագյոզ արարքներով կամա թե ալկամա նույնական աջակցում են դասակարգային թշնամուն:

ԽՈՐՀԵՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻՍԼԻՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒՄ ԻԹՅԱՆ ՈՐԻՆԱԿ ՊԻՏԻ ՏԱՆ

Հայաստանում յեղած խորհանտեսությունների մեծ մասը կամ զուտ անասնապահական են կամ անասնապահական թերում ունեն: Եեկ այդ հասկանալի յե: Մեր գյուղատնտեսության մեջ գերակշռող տեղն անասնապահությունը պիտի գրավի (տեխնիկական կուտանտարժման միան) բնական հարուստ նախադրյալների պատճառով: Ուստի պետության ձեռնարկումները, գյուղատնտեսության ասպարեզում, առանձնապես լեռնային և նախալեռնային շրջաններում, գլխավորապես պիտի կատարվեն անասնաբուծության արագ զարգացման և նրա ուկոնստրուկցիայի ուղղությամբ:

Անասնաբուժության ներկա կիրառահամապետական, քոչվորական վիճակը կմրող և փոխվել — ինչպես վերև առացինք, միայն անասնաբուժական խոշոր գործարանների (խորհանտեսությունների) և կոլտնանուական խոշոր Փիրմանների ակտիվ ներգործությամբ: Մեր խորշը բրդային տնտեսությունները պետք ե ռացիոնալ, նոր, գիտական անասնապահության որինակ տան՝ անասնների ազնվացման, խնամքի կերպարման, արդունների բարելավման և աշխատանքների մեջենայացման ասպարիզում: Այդ ուղղությամբ մեր խորհանտեսություններն զգալի նվաճումներ ունեն: Որինակ՝ Սեմյոնովկայի տնտեսությունը բավական հաջողությամբ ազնվացնում և Ղազախի անասունների աեզական «գրգռ» ցեղը: Այժմ այդ անասունները մոտավորապես մեկ ու կես անգամ ավելի մին և 2—3 անգամ ավելի կաք են տալիս, քանի քեզ անհատական տնտեսություններում խնամվող նույն «գրգռ» ցեղի կովերը: «Զագ» (3-րդ) խորհունական ցեղական կովերը որպական 14—16 կիլո կաք են տալիս, վարովենակ խնամվում են նոր ձեմերով, նրանց ուտեցնում են սիլոս, թեփ, քուսպ և ճակնդեղ:

Մեր խորհանտեսությունները մասամբ արդեն հաջողեցրել են անասունները պահել նոր ձեմի լուսավոր ու մաքուր գոմերում: Նրանք բավական աջակցություն են ցույց տալիս շրջակա գյուղերի աշխատավոր անասնաբուժներին, սովորեցնում են ճակնդեղի ու խոտաբուժների մշակությունը, ցեղական ցույերով աջակցում են նրանց անասունների ազնվացմանը և այլն: Սակայն նրանք այդ նվաճումների հետ միասին աչք ծակող թերություններ շատ ունեն:

Գետք և նշել, վոր մեր անտոնագահական խորհանտեսությունները յետ են մնում վերև հիշատակված ինդիբների իրագործման ասպարիզում: Անասնաբուժության նոր ձեմերին անցնելու ասպարիզում ունեցած վորոշ հաջողություններն արձանագրելով, մենք չենք կարող չարձանագրել նաև այն, վոր մեր խորհանտեսությունները գեռևս սոցիալիստական խոշոր մեքենայացված անասնապահության որինակ չեն տվել և վոր անասնապահության նահապետական պլրիմիտիվ ձեվերը դեռևս բավական տեղ ունեն նրանցում: Ռացիոնալ անասնաբուժությունը, բառիս լայն իմաստով, հնարանասնապությունը, բառիս լայն իմաստով, Դրան չեն առանց քոչվորական կյանքին վերջ տալու: Դրան ել ձգտում ենք մենք: Սակայն այդ գործը չի կարելէ կատարել առանց կենդանի, չոչափելի որինակով դյուղացիությանը համոզելու, վոր նստակյաց անասնապահությունների կիմնված ցանովի խոտերի, սիլոսի, ճաշությունը՝ հիմնված ցանովի խոտերի, սիլոսի, ճաշությունը՝ հիմնված ցանովի խոտերի: Այդ կենդանի որինակը մեր անասնապահությունները պիտի տային, վորոնք թեև անցել են արմատապտուղների և խոտաբույսերի մշակման, այսուտամենայնիվ իրենք ել մեծ մասամբ վոչ ռացիոնալ քոչվորական անասնապահություններն են վարում (Ղարաղալա, Ալագյաղ, Սեմյոնովկա և այլն):

Մյուս կողմից այդ տնտեսություններն ապահովված շմիներով նոր ձեմի գոմերով, խողանոցներով, ինվենտարով, գոտտեխնիկներով և անասնաբուժներով, չեն կարողանում ազատադրվել անասնապահության նոմադակական ձեմերի մնացորդներից: Դրան պետք ե ավելացնել այն անտեսեաությունը, վոր գոյություն ունի մեր ներ այն անտեսեաություններում: Նրանց գլամուրը խնդիրն ե խորհանտեսություններում:

կարճ ժամանակում տալ բարձր ապրանքային յելունք։ Հենց այդ նպատակով ել պետությունն ահազին գումարներ և տրամադրում այդ գործին։ Այն հսկայական առավելությունները, վոր ունեն խոշոր անտեսությունների անհատական մանր տնտեսությունների հանդեպ, հնարավորություն են տալիս կարճ ժամանակում, ուժերի ու միջոցների նվազագույն զործադրումով, մաքսիմում տնտեսական եթեկա ստանալ։ Սակայն բյուրոկրատիզմը, չինովնիկական վերաբերմունքը դեպի պետական գույքը, անկուլտուրականությունն այնքան են նվազեցնում մեր խորհուտելիունների ապրանքային յելունքը, վոր նրանք հաճախ իրենց բյուն զգալի գեֆիցիտով են փակում։ Բավական և հիշատակել այն տասնյակ հազարների անանտեսությունը, վոր մենք յերեղան հանեցինք Ալաղյաղի, Վարանցովկայի տնտեսություններում։ Բավական և այստեղ հիշատակել, վոր միայն վերջերս Ալաղյաղի խորհուտելություններում այստեղ բուն դրած վնասարարները կոտորել են 300 զոչխար, Ղարաղլալյում փչացրել են անտեսության հորթերի 65 տոկոսը, Վարանցովկայում փչացրել են 290 հորթ, 15 կով և այլն։

Խորհուտեսությունները վարչությունները, կոմբինատներն ու բանվորները պետք են մտածեն այս հարցերի շուրջը։ Նրանք չպետք է հանդուրժեն անթույլատրենի այն դրությունը, վոր գոյություն ունի այժմ անանապահական խորհուտեսություններում։ Նրանք պետք են արագացնեն կառուցումները խորհուտեսություններում։ ՅԵԿ Ալաղյաղի, Ա՛ Սեմյոնովկայի, և Յանըի խորհուտեսություններում շենքերի կառուցման գործն անմիջիթար վիճակումն ե. միայն Սեմյոնով-

կայում 900 գլուխ անասուն գուրսն և մնում, վարանցովի արյունակում՝ հաղար գլուխ և այլն։ Առաջիկա տարին խոչը յեղջուրավոր անասունների թիվը խորհուտեսություններում բարձրացվում է մինչև 18—19 հազարի, իսկ խորհուտեսությունների ներկա շենքերը հազվագի 3 հազար գլուխ կարող են սպասարկել։ Ահա ինչու խորհուտեսությունների առաջ հարց և գրվում էրինապատկել ու յեռապատկել շինության թափը, արված վարդերի (մոտ 5 միլիոն) ուցիոնալ ոգտակարծումով այս տարի խորհուտեսությունները հնարավորության առհմաններում ապահովվել նոր, շվեյցարական տիպի դոմերով, և լեկտրուկայաններով, խոզանոցներով, կառուցիչ ճանապարհներ, հնուախուսապձեր և այլն։

Առաջիկա տարինները մեր անասնապահական խորհուտեսությունների համար հսկայական թուշքների տարինները պիտի լինեն։ Պիտի ձեռնարկել նոր, խոչը խորհուտեսությունների հիմքադրման (Բազարչայ, Միխանա, Կարախաչ) այն հաշվով, վոր այս տարի խորհուտեսություններում ունենք մինիմում 19 հազար խոչը յեղջուրավոր անասուն, վաշխար 45 հազար, խող 2400։ 1932 թվին պետք է ունենանք վոչ պահանքան 28 հազար խոչը յեղջուրավոր անասուն, 85 հազար վաշխար և 3900 խող։ Այդ անկասկած խոչը թը-ռիչը կը լինի, յեթե նկատի ունենանք, վոր այժմ մեր խորհուտեսություններում ունենք ընդամենը մոտ 3000 խոչը յեղջուրավոր անասուն և մոտ 20 հազար վոչ-խար։ Վերոհիշյալ պլանի իրադործումով մենք հնարավորություն կունենանք դրամի չափով բաժելու մոի, ճարպի ու կաթնամթերքների ուղար պակասությունը։ Սակայն այդ գործի նախապատրաստումը դատապար-



տելի գանդապաթյամբ և առաջ զնում և այստեղ բարձական խոչը տեղ և գտել ոպորտունիսական ինքնաշուը։ Շենքերի կառուցումը, կաղըքերի պատրաստումը, պահանջված քանակությամբ անսառւնիք հայթայթելը պետք և այժմքանից կատարվի։ Այդ գործը պետք և հայրմակերպեն խորհուտեսական բանվորները սոցմրդմոն ու հարմածայնության լայն ծավալմոմբ։

ԽԱՀԸ ՄԵԶ ԿՈԴՆԻ ԱՐԱԿ ԿԵՐՊԱԾ ԼԱԽՄԵԼԱՒ ՄՅԻ ՊՐՈՔՏԵՍՅ

Այն անսահման հնարավորությունները (մանուկանդ ճիշտ տեղեղ կերը Լոռու, Դելիչանի, Զանդկուրի միասուններում) և այն խոչը անտեսական եֆեկտը, զոր կոտ խոզի ամենակարճ ժամանակամիջոցում—մեզ թերագրում և ամելի ուժեղացնել խողաբուժություն զարգացման տեմպերը, վաչ միայն դյուզի սոցիալիստական սեկտորում, այլ և անհաւական աշխատավորական անհետությունների գծով։ Հենց այս տարի ստանց Կոլտնութիւնարոնի պատշաճ զեկավարության ու խրախուսների՝ Ալյաջքերու, Դելիչանի մի շաբք դրազերում (Շնող, Դսեղ, Աւզունլար, Մանահին և այլն) կարողնահությունները խողաբուժությունից հակառական ոգություններ ստացան և կրկնապատկեցին ու յեռապատկեցին խոզերի թիվը։

Խողաբուժությունը չի պահանջում այն հարյուր չափորները, վարոնք ծախսաւմ են անսառւնիքի գոմերի վրա, իսկն սուանց չվեցարտկան գոմերի յիշ և «յուլա գնում»։

Բնկ. Յակովլիկը 16-րդ համապումարում շատ չէտաքքիր հաշիվներով սպացուցեց, վոր խողաբուժու-

թյունը հնարավորություն կտա մեղ արագ կերպով լուծել մոի ու ճարպի հարցը։ Ահա ընկ. Յակովլիկի արած հետաքրքիր հաշիվները։ Խոզը յերկու հիմնական և չափականց արժեքավոր առավելություն ունի, վոր պետք և հաշվի տոնի թե ամբողջ կուսակցությունը և թե ամրոցը յերկիրը։ Խոզը մեացած բոլոր կենդանիներից ալիքի արագ և միս ստեղծում և սպավլող կերի մեկ միավաքի դիմաց ավելի շատ միս և սալիս, քան խօշոր յեղաւրափոր անասունը։ Այս յերկու առավելություններն ել խոզին ստացին տեղի են վերապահում։

Անգլիական տեսակի խոզը և նրա ու մեր տեսակի մետիսը, ԽՍՀՄ Հողգործկոմատի Կենդանաբուծության ինստիտուտի ավլյաններով, կանոնավոր կերակրելու գուգքում։ 14 տժուում տալիս և ուստական 4 յեզի հավաար միս (մինչև 54 վութ), այն ժամանակ, յերբ խոչը յիշջուրափոր անսառւն այդ ժամանակամիջուցում տայիս և ժիայն 14 ժութ միս։ Բացի դրանից, մեկ կիլո խոզի միս արտադրելու համար պետք և ծախսել 5 կիլո կեր (հացահատիկի վերածում), իսկ մեկ կիլո տամարի միս արտադրելու համար պետք և ծախսել 15 կիլո կեր։ այսակից հետեւում ե, վոր միս արտադրելու գլխավոր մեքենան մերձակուր ասրբիներում խոզն է։ Այս չափամանքի վրա պետք և դարձնենք մենք մեր գլխավոր ուժությունը, խորհրդացին անսառւթյունների և կորանեսությունների գլխավոր ուժությունը։ Այս ուղղությունը պետք և ծախսվեն կենդանաբուծությունը համար համեցվաղ հիմնական միջոցները։

Այսակից ել բլիսում են այն ձևանարկումները, վոր կոլանահասությունները պետք և կերարին խոզերի

ժայրակաղմը դաբդացնելու հսկաը թէ Հանրայնացված հօտերում և թէ անհատական տնտեսություններում»:

Ահա ինչ հակայական նշանակություն ունի խոզը տնտեսաբուծության պրաքիմը լուծերու մեջ։ Ասկայն ակզերում զրեթե ուշադրություն չի դարձվում խոզաբուծության վրա։

Ինչ խոսք՝ վար խոզը շատ ոգուտ կատ միայն այն գեղագում, յերբ կտղնացացքին նրա տեսակները և կիսնամուշները, կուլտուրական ձեմերով։ Մենք պետք եւ դարձ ուսնք ցնղական խոզերի դարձացմանը և անցնենք նըրանց տնային կերպարմանը։ Սակայն դրա հետ միտին այժմ անդերում կարելի չեւ կազմակերպել նաև «շըմիկ» խոդաբանության՝ արժատապատճենների հետ սպասարկութելով նաև անտառի կերը (ինչպես անտառապահության որննունների սահմաններում)։ Բայց մեզ ցնղական խոզ եւ պետք, նա յել անտառում շարժվել չի կարող։ Այսուեղ մեզ ոզնում եւ ցնղականի խոռոշությունը։ Դիլիջանի ֆերմայում անդիլիական «Յորկչերի» և տեղական խոզի խամառողքը հրաշալի արդյունք արդիք։ Թէ տեղական պայմաններին հարժարվելու և թէ քաղի ակսակետից։ Այն ժամանակ, յերբ տառը տարեկան միջակ կույր Դիլիջանում հացիվ 7—8 միութ միութ առիրա։ «Յորկչերի» խառնուրդի 2 տարեկանը ընչին ծովագույն 8 միութ միութ ու ձարակ տիմից։ Այդ որդինական շրջակա գյուղացիությունը զարկ տվեց խողարուծությանը, սակայն անտառային ունժիմը և տեղական որդանների բացասական վերաբերմունքը դեպի խողարուծությունը 1929—30 թվերին մի շարք գյուղերում (որինակ՝ Պոզոսքիլիսայում, Բլղան-Զայում) գրեթե վերացրին անտառաբուծության այդ կարելով ճյուղը։

Մեր գյուղաբորչությներն եւ փոխանակ խրախուսելու խողաբուծությունը, նրա դեմ շատ տեղերում ուղղակի հալածանք են սկսել։

— Վնասներ շատ են տալիս, դրանց քոքը պիտի կտրացնել։

Եեվ լսկապես քոքը կտրացնում են։ Գյուղական դատարանները խողից 6—7 անգամ ավելի տուրք են վերցնում (յիթե վնաս ետքել), քան մյուս մանր անտուններից։ Ի հարկե այդ չի սշանակում, վոր անտառն ու ցանքերը քանդողներին չափակի սանձահարել։ Վոչ, ընդհակառակն։ Սակայն դա այնպես պիտի անել, վոր խողաբուծությունը չկրծատվի և միջոցներ պիտի վոր խողաբուծությունը չամար։ Սակայն արդ ասպարիֆերով զարգացնելու համար։ Սակայն արդ ասպարիֆերով զարգացնելու համար մեղավար որդաններն եւ վոչ միայն քիչ բան են զում զեկավար որդաններուն հետագա դարձացման արել, այլ և խողաբուծության հետագա դարձացման համար թույլ տեմպեր են նախատեսել։

Վոչ Հողժողկոմատր և վոչ եւ կոլտնտկենտրոնը մինչև 1932 թիվը խողերի քանակը գոնե կրկնապատկեւուու պլան չեն առաջարկում, մինչդեռ 16-րդ համագումարը շեշտը զնում եւ խողաբուծության դարձացման մարզ, վորպես մայի պլորենմի ամենաարագ լուծման գըլվագոր միջոցի։ Մեզ մոտ կոլտնտեսությունների գծով խախտեսվում եւ այս տարի ունենալ միայն 5 հազար խոզ (մայր), խորհանակություններում՝ 1931 թվին՝ 2400, իսկ 32 թվին՝ 3900։ Իսկ 16-րդ համագումարը խնդիր եւ զնում «Սլինովոդի» առաջ յերկու տարում խողերի թիվը 4 հարյուր հազարից հասցնել առնվազն 7 միլիոնի, այսինքն՝ առեցնել ավելի քան 17 անգամ։ Մենք հնարակորություն ունենք վոչ թէ 150-ական խոզ

ունեցող կոլեկտիվներ հիմնելու (ինչպես նախառեսում է Կոլտնտէկենտրոնը), այլ կարող ենք Դիլիջանում, Լուսում, Շամշադիխում հիմնել 10 հազարի շափ խող ունեցող խորհունտեսություններ, 2—3 հաղար խող ունեցող արդյունաբերական խոշոր կոլտնտեսություններ և հնարավորություն ունենք խորհունտեսությունների գծով հնդամյակի վերջում մի քանի տասնյակ հազար խող ունենալ Հողժողովագումատի նախատեսած 3900-ի գիմաց : Լավ պիտի հիշել, վոր «խոզն անասնաբուծության թերև ինդուստրիան ե» և վոր նա մեզ կողմի ամենաարագ կերպավ լուծելու մասի հարցը» (ՅԱԿՈՎԼԵԿ) :

Ահա ինչու այս տարվա պլաններում կը լեկտիվ և խորհանութեառները պետք ե մեծ տեղ տան խողաբուժությանը:

ԿՈԼՏԵՑԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՏԱԿՆԵՐ

Լեռնային ու նախալեռնային շրջաններում ամենից շատ կղլտնտեսությունները հնարավորություն ունեն անտեսությանն աստիճանաբար անասնաբուծական թեքում տալու: Եթե անհատական ժանր տնտեսության «ունիվերսալիզմ» (բազմազան, բազմաթիվ ճյուղերունենալը) բացատրվում է նրա տնտեսական ամուր ուղղվածությամբ, յերբ տնտեսության մեջյուղը վնասավելու դեսքում գյուղացին իր կարիքը հոգում և մյուս ճյուղի յնկամուտով, ապա կոլտնտեսությունները պետական աջակցությամբ, հենվելով աշխատավայրերի ու կազմակերպված աշխատանքի վրա, կարող են տնտեսական ամուր ռեզերվներ ստեղծել և վճռակա-

նորեն դրւբա մղել այն կուլտուրաները, վորոնք ձևավա-
ռու չեն ավշալ զիջանի պայմաններում։ Եթե անհա-
տական տնտեսությունն իր ուժերով կզժվարանա այն-
պիսի ձեռնարկումներ սկսել, ինչպես, որինակ, նոր տի-
պի գոմերի կառուցումն և, ցեղական ցուլերի, կովերի
և վոչխարների ներմուծումը և այլն, ապա կոլտնտե-
սություններն այդ հրաշալի կերպով կարող են անել և
պետք ե անեն։

թե միայն անսուլնների ռացիոնալ կերպակրութը և
ցեղի աղջվացումը ինչպիսի հսկայական յեկամուտներ
կտա, յերեվում և հետեւյալ մոտավոր հաշվալներից.
պետքէ լրացնի կարմակերպած ռացիոնալ կերպակրման
հետեւյանքով Դիլիջանի Պողոս գյուղում կովը կաթի
քանակը 8 ֆուտից բարձրացրեց մինչև 22 ֆուտի (որա-
կան)։ Ուրեմն հնարավոր և կովի կաթնատվությունն
ուժեղ կերի միջոցով առնվազն կրկնապատճել։ Յեթէ
մենք կոլտնտեսություններում կազմակերպված ձեվով
ռացիոնալ կերպակրման դռնե տարրական պայմանները
կիրառենք, դրանով յուրաքանչյուր կովից կստանանք
ամենաքիչը մեկ կիլո ավելի կաթ և տարեկան մոտ յեր-
կու տասնյակ հազար ցենտներ հայելալ կաթ կստա-
նանք։

Յեթե մեզ հաջողվի «բալբաս» և այլ տեսակի վոչ-
խարների ցեղը զարգացնել և մեր հոտերի մեկ քառորդի
յուրաքանչյուր վոչխարի բուրդն ավելացնել կես կիլո-
յով (մինչդեռ կարելի յէ ավելացնել մեկ և կես կիլո-
յով), ապա մենք առաջիկա տարիներում միայն կոլտըն-
տեսություններում 1000—1500 ցենտներ Հալիւմալ
բուրդ կստանանք տարեկան, իսկ այդ մեծ աշխացու-
թյան կլինի մեր տեքստիլ արդյունաբերությանը:

Գըռֆեսոր Քալանթարը այսպիսի մէ հետաքրքիր հաշիվ և արել յնթե այս տարի Հայաստանում յեղած վոչ-
խարների գոնե օ տոկում նոր ձեվերով խնամվի, ժոռ
75 հազար փութ պանիր ավելի կտացվի: Ել չեմ խո-
սում այն հաջարավոր տոնն հավելյալ մոի և այլ յե-
կամուտների մասին, վոր կարելի յե ստանալ անասնա-
րուծության կուլտուրական ձևերին անցնելով:

Իսկ այդ գործում կոլտնտեսությունները պետք ե
քայլեն տուաշից և մեր հետամնաց անասնաբուծությու-
նը վեր քաշեն իր ներկա վիճակից:

ԻՆՉՊԵՍ ՃԱՐԳԱՑՆԵԼ ԱՆԱԽԱԲՈՒԾՈՒ- ԹՅՈՒՆԸ ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ

Կուլտուրական անասնաբուծության անցնելու գոր-
ծում հսկայական դեր ունեն խաղալու նաև անասնաբու-
ծական պարզ միավորները՝ արտադրական ընկերու-
թյունները: Անհատական, յրված տնաենություններին
աշակեցելու լավագույն կազմակերպական ձեվերից մե-
կը նոր կազմակերպված այդ ընկերություններն են:
Նրանք հենց այս տարի բարձական խոշոր ձեռնարկում-
ներ են սկսելու:

Ահա անասնաբուծական կոոպերացիայի ծրա-
գիրը.

16 շրջաններում կազմակերպվելու յեն 26 ցուլապա-
հական ընկերություններ 104 ցուլերով և 130 հազար
ոռություններով: Պանրագործարանների շուրջը 10
շրջաններում կազմակերպվելու յեն 15 ագրոլոոտեխ-
նիկական կոմպլեքսներ, վորտեղ լինելու յե 300 հա-
զար ոռություն ֆինանսավորում: Բացի դրանից կազմա-

կերպվելու յեն 20 կոնտրոլ միություններ 9 շրջաններ-
ում, վորտեղ պահպելու յեն 3000 կով: Դյուրատոնտե-
սական ընկերություններին տրվելու յե բացի ցուլապա-
հական ընկերություններում յեղածներից, դարձյալ 250
նույն՝ 125 հազար ոռություն արժողությամբ 13 շրջա-
նում:

Պատրաստվելու յեն ձմեռանոցներ վոչխարաբու-
ծությունը բնական պատահարներից զերծ պահելու հա-
մար, վորտեղ պետք ե կառուցվեն թեթև տիպի գոմեր:
Առաջիկա տարում կոոպերացիայի գծով կառուցվելու:
յե 10 գոմ 65 հազար ոռություն ծախսով: Կերի սակա-
վության գեղքում մասսայական կոտորածը կանխելու-
նապատակով ձմեռանոցներին կից կազմակերպվելու յեն
կերի բազաներ: Այս տարի բազաներ կազմակերպվե-
լու յեն 7 կետերում՝ 24 հազար ցենտներ խոտով, 72
հազար ոռություն ծախսով:

Ձմեռանոցներում և վորու ամառային արոտավայ-
րերում վոչխարաբուծությունը տուժում և ջրի սակա-
րերում վոչխարաբուծությունը տուժում և ջրի սակա-
րերից: Յերբեմն ջրի բացակայության պատճառով
վոչխարաբուծությունը հոտերը հարկադրված են լինում տաս-
նյակ վերստեր կտրել: Վորպես սկզբնական աշխատանք
կաթնատնտեսապահութեան Միության գծով այս տարի
կառուցվելու յե 3 ջրամբար, 27 հազար ոռություն ներդր-
րումով:

Վոչխարանների ազնվացման գործում մինչև այժմ
գոչ մի աշխատանք չի կատարվել, այնինչ Խորհրդային
Հայաստանի վոչխարանների ցեղերից կան այնպիսիներ,
ինչպես բալբար, վորն իր հատկությունով արժանի յե-
տչաղբության: Կարելի յե այդ ցեղն աղնվացնել և վո-
ռու շրջաններ գարձնել բալբար մասսայական տարած-

ման շրջաններ : Այդ նպատակով առաջիկա տարում կաթնանասնապահական Միության գծով կազմակերպվելու յէ 6 բեղմնակայան՝ 160 լավորակ խոյերով, և հաղար մայրերի համար : Տեղական այծեղն աղնվացնելու նպատակով կազմակերպվելու յին անդորրական այծերի 7 բեղմնակայան՝ 140 բեղմնակորչող այծերով : Այս աշխատանքը պահանջում է 14 հաղար ոռորդու ներդրում :

Վոշարի կաթեց լավորակ պանիր պատրաստելու և կոլտնտեսությունների ու կոռակերացված գյուղացիության վոչխարիների կաթը վերամշակելու նպատակով առաջիկա տարում կազմակերպվելու յին 40 շարժական դորժարան 45 հաղար ոռորդի ներդրումով : Կուտնահետություններում խողարուժական խոչոր արդյունաբերական տնտեսությունների կազմակերպելուց բացի, միաժամանակ պիտի կոռակերացված շքավոր և միջակ տնտեսություններում զարկ տալ անառնապահության այդ ճյուղին, կազմակերպել զյուղաբարտադրական ընկերություններում հանրային նախիրներ և բեղմնակայաններ : Առաջիկա տարում կաթնանասնապահական Միության գծով կատարվելու յէ վորակավոր մայր խոզերի մատակարարում գյուղաբարտադրական ընկերություններին՝ 71 հաղար ոռորդի ներդրումով :

Հիմնվելու յին 135 աղնվացեղ խոզերով 28 բեղմնակայան, վորը պահանջում է 50 հաղար ոռորդու ներդրում :

Ցուցադրական նպատակով, ինչպես և արտադրական ընկերություններում համայնացված խողարուժությանը զարկ տալու համար այս տարի կառուցվելու յէ 6 համայնական գոմ 30 հաղար ոռորդի ներդրումով : Ահա

այսպիսի խոչոր գործեր ունեն կատարելու դյուղաբառ-դրական ընկերությունները :

Այժմ հիմնական թերությունն այն է, վոր քերազնահատվում ե արտադրական պարզ միավորների ցանցի գերը, վորի հետեւվանքով ել մինչեւ այժմ աշխատավոր անառնապահների գեռ մի մասը չի ընդգրկվել այդ ընկերությունների մեջ, թեև կուսակցության դիրեկտիվների համաձայն՝ այդ գործը պետք և վարուց ավարտված լիներ : Յեղած ընկերություններն ել մեծ մասմբ գեռես անդորձության նն մատնված :

Վողջ անառնապահական աշխատավորությունն ընդգրկել արտադրական ընկերությունների մեջ, այդ ընդգրապություններն աշխուժ գործի դնել, նրանց միջուկերացնել կերի բազան անհատական սեկտորում, ցով լայնացնել կերի բազան անհատական սեկտորում, ցյուղացիներին վարժեցնել նոր և կուլտուրական անառնաբուժության—ահա այսորվա կենտրոնական խնդիրներից մեկն անառնաբուժական շրջաններում :

Գյուղաբարտադրական ընկերությունները պիտի այժմվանից կարմակերպեն կերի, արմատապուղների ու խոտաբույսերի սերմացվի, կաթնամթերքների վեհամշակման գործիքների ու մեքենաների, աղնվացեղ ցուկերի ու այլ անառների հայթայթումը : Պուեկտիվ ցուկերի միջոցով (համայնական գոմեր, կեձեռնարկումների միջոցով (համայնական գոմեր, կեձեռնարկումների, ցուկեր և այլն), անառնաբուժական ընկերությունները վոչ միայն մեր պրիմիտիվ անարդյունավետ անառնաբուժությունը կը դնեն զարգացման նոր ճանապարհի վրա, այլև այդ աշխատանքների պրոցեսում վերամշակման կենթարկեն անհատական տակարգանալով :

կանցնեն ավելի բարձր աստիճանի— կվերածվեն կուտնայնությունների:

Իսկ այդ գործի հաջողությունը պահանջում և ջախ-
չախել և՝ արտադրական ընկերությունների կաղմակեր-
պումն ինքնահօսի թողնելու աջ արամադրությունները,
և նրանց գերը թերագնահատող «ձախ» տենդենցներն
ու պրակտիկան:

ԼԵՅԱՑՆԵԼ ՎԵՐԻ ԲՈՒՅՍՈՒԹԻ ՑԱՆՔԵՐԸ

Անասնաբուժության պրոբլեմի լուծումն ինքնին
պահանջում և առաջին հերթին լուծել կերի բազայի
հարցը: Կերի պահասության պատճառով մենք առա-
նյակ հազարավոր անասուններ ենք կորցնում և զբրկ-
վում ենք հսկայական քանակությամբ կաթից ու մսից:

Այստեղ ևս մենք բավական ցած աստիճանի վրա
յենք գտնվում, այնքան ցած, վոր անասնաբուժական
այնպիսի մի յերկրի, նույնիսկ լեզնային ու նախալեռ-
նային շրջաններում, ցանքերի 80—85 տոկոսը հատիկա-
ցին բույսերն են բռնում և մնացածի միայն մի մասն
ևն բռնում խոտաբույսերը: Մինչդեռ Ամերիկայում ամ-
բողջ ցանքերի 61 տոկոսը բռնում է անասունների կերի
ցանքը:

Յերկրի անտեսական շրջանացումը և ռայոնների
մասնագիտացումը, ըստ կուլտուրաների, վորին ձեռ-
նարկել և կառավարությունը, անշափ թույլ և կառար-
գում: Այստեղ վարչական միջոցներով չե, վոր հարցը
պետք է լուծվի, այլ զուտ տնտեսական ներզործման
ճանապարհով: Յերբ բոլոր միջոցները ձեռք կառնվեն
և անասնաբուժական շրջանները կապահովվեն հացով,

այդ դեպքում միայն հնարավոր կլինի արագության
անասնաբուժական թեքում ուստ գյուղացու ունիվեր-
սալ տնտեսությանը և հացահատիկները գուրս ժղելու
ձանապարհով լայնացնելու արմատապուղների ու խո-
տի ցանքը, վորոնք մի քանի անգամ ավելի յեկանուա
են տալիս և վորոնք անասնաբուժության զարգացման
դիմավոր նախաղայմանն են հանդիսանում: Եթե տե-
ղական որգանները, կաղմակերպություններն անասնա-
բուժական շրջանները չափահովեցին հացով և խոտա-
բույսերի ու արմատապուղների սերմացվով: Այդ
գործն այս տարի պետք է կարգավորվի և կոնտրակ-
տացիայի մեթոդի կիրառման հիման վրա պետք և
զարնանացանին բավական մեծ տեղ հատկացվի խոտա-
բույսերի ու արմատապուղների ցունքի տարածու-
թյանը: Հենց այդ խմատով ել վորոշում է հանել մեր
ը յանը: Հենց այդ խմատով էլ վորոշում է հանել մեր
կուսակցության կենտրոնական կոմիտեն: Կենսկոմի
հաստատած պլանով նախատեսվում է այս գարնանը
կերի արմատապուղների տարածությունը 1930 թ.
523 հեկտարից հասցնել մինչեւ 5 հազար հեկտարի,
ցանքի խոտերին՝ 5466 հեկտարից 20 հազար հեկտա-
րի, կարտոֆիլինը (վորով նույնպես պետք է կերակրել
անասուններին) 9220 հեկտարից 20 հազարի և սիլոսի
բույսեր, վար մինչեւ հիմա վոչ մի հեկտար ցանքած շի-
յեղել, այս տարի 5 հազար հեկտար պիտի ցանենք: Այնպես
վոր այս տարի արմատապուղների ցանքը
պիտի պահպանին՝ 845 տոկոսով, ցանքի խոտինը՝
265 տոկոսով և կարտոֆիլինը՝ 105 տոկոսով:

Բոլոր աշխատավոր գյուղացիները չահարդրոված
են այս պլանը կատարելու գործում: Թե ինչու յեն շա-
հագրգոված, այդ յերեսում և հետեւալ հաշիվներից.

մի հեկտար խոռնարքից գյուղաշին ստանում և 150—200 փութ խոտ, ցանովի խոտերից (յոնջա, յերեքնուկ և այլն), 500—600 փութ, կարտոֆիլից՝ 900—1000 փ., իսկ կերի ճակնդեղից Դիմիջանի խորհանությունն ստացավ ամեն մի հեկտարից մոտ 4 հազար փութ բերք։ Համեմատնեք այդ ահապէին բերքը 35—40 փութ ցորենի կամ զարու հետ, վոր ստանում են լեռնային շըրջաններում մի հեկտարից։ Ահա և ձեզ թանգաղին յուղը և պանիրը։ Ահա ինչու լեռնային և նախալեռնային շըրջաններում պետք ե վճռականապես գուրս մղել հացահատիկների կուլտուրան և անցնել խոտացանության և արմատապուղների մշակության։

Ենք մատնանշում ենք կերի հարուստ և գրեթե մոռացված մի այլ աղբյուր։ Այդ մեր անտառներում փառող կաղինն ե, վորից մենք ունենք անսպառ քանակությամբ և վորը հրաշալի կեր և խողի (մասամբ ել մյուս անսառուների) համար։ Հաստատ կարելի յե պընդել, վոր մթերման դործը չկազմակերպելու հնտելանքով, ամեն տարի հարյուր հազարավոր ցննուներ կաղին է փշանում Դիմիջանի, Շամշադինի, Լոռու և Զանգեզուրի անտառներում։ Փշանում ե և անսպառ քանակությամբ վայրի համար։ Վերջինի մթերումն աշնանը թեհրավ չափ չկազմակերպվեց, սակայն պետական տվյալների քան 30 հազար փութ համար։ Վոր մի քանի այդքան ել մեր անշնորհքության պատճառով մնաց ձյունի տակ, կատած չկա։ Յեթե համարի համարման 1930 թ. թեկուղ շատ դանդաղ տեսմութեալ տայս տարի կաղմակերենք կաղինի մթերում, ապա առնվազն 7—8 անգամ ավելի կաղին կհաջաքվի, վորը կտա մեզ մոտ 200 հազար փութ ուժեղ և շատ եժան կեր և վարով մենք կարող

ենք մի ամբողջ տարի 6—7 հազար խոզ կերակրի։ Իսկ մյուս կողմից ել դյուզի աշխատավորությունն ահա պին հավելաւ յեկամուտ կստանա, ինչպես ստացավ համարից։

Սիլոսը, վոր մի ամբողջ հեղաշրջում և առաջ բերելու անամսաբուծության մեջ, մեղ մոտ արժանի ուշադրության չի արժանանում։ Հայտնի յե, թե ինչպես Հողժողկոմատի աշխատողներն անցյալ տարի բացարձակապես տապալեցին սիլոսի կամպանիան։ Կյուղածակապես ստապալեցին սիլոսի կամպանիան։ Կաղմակերպությունները նույնպես վոչինչ չարին այդ ուղղությամբ։ Այդ դասերը պետք ե շարժեն մեր անկերներին և ստիպեն նրանց այժմվանից նախապատրաստելու առաջիկա գարնան սիլոսի կամպանիան։

Հողժողկոմատի պլանով այս տարի Հայաստանությունների և գյուղատնտեսական ընկերությունների գծով պետք ե պատրաստել 125 հազար տոնի ովրու, վորը հարյուրավոր փոսեր և աշտարակներ և ովրու, վորը հարյուրավոր փոսեր և աշտարակներ և պահանջում։ Դրան զուգընթաց, անառնաբուժական պահանջում։ Դրան զուգընթաց, այժմվանից միջոցների պիտի խորհանտեսություններն այժմվանից միջոցների պիտի խորհանտեսություններն առաջանացնելու իսչոր անունի համար 3 տոնն սիլոս ապահովելու համար։

Յեվ Հողժողկոմատն իր որգաններով, և՝ կոլտընտեսությունները, խորհանտեսություններն ու արտադրական ընկերություններն այսորվածից պետք ե կադրեր պատրաստեն այդ դործի համար, Հողեր հատկացնեն սիլոսի բույսերի ցանքերին և ձեռնարկին աշխատակների ու եղբերի կառուցմանը։

ՎԵՐՋ ԱՐՈՏՆԵՐԻ ՈԴՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՐՐԱՐԱՍ ՑԵՂԱԿԱԿԱԵՐԻՆ

Ներկայումս անասնաբուծության գլխավոր հենա-
մնն արօտներն ու խոտհարքներն են։ Մրանք ահազին
տարածություններ են բոնում (մոտ 53 տոկոս), մինչ-
դեռ մի քանի (բուրժուական գաղափարախոսություն
ունեցող) մասնագետներ աշխատում են ազգացուցել,
վոր իրը թե մեր արօտները ծանրաբեռնված են և վոր
միակ յելքը անասունների թիվը կրծատեն ե։
Լավ մտածեցեք, թե ինչ են ասում այդ կուտակյին ի-
գեռոգները։ Այսեղ մերկապարանոց նացիսնալիզմն է
հրապարակ գալիս։ Այդ «անմեղ» միտքը կուրմկները
Դիլիջանի, Շամշադենի, Զանգեզուրի շրջաններում ա-
զելի աշկարա յեն ասում։

— Արոտները քիչ են, ինչո՞ւ յենք Ադրբեյջանի
թուրքերին թողնում մեր սարերը դան։

Ահա թե ուր են խփում այդ գալիքը։
Այդ հականեղափախական — ազգայնական տեսու-
կետներին և արարքներին (թշնամություն հրա-
հրելը հայ ու թուրք աշխատավորների միջեվ՝ ա-
րոտների պատրիարքի) պետք ե մահացու հարված տան
մեր կուսակցական կազմակերպությունները։ Արոտ-
ները մեղ մոտ անշափ շատ են և անշափ հարուստ։
Հարցն այն ե, վոր մենք ամենադիշատիչ կերպով ենք
ոգտագործում մեր արօտները, վորսվհետեւ անկուլ-
տուրական ենք, և առայժմ գյուղական կյանքում ան-
կազմակերպ տնտեսությունների տարերայնությունն և
իշխում։ Հապա այդ ի՞նչպես ե, վոր Դանիայում, Հոռ-

լանդիայում նույն տարածության վրա տաս անդամ
ավելի շատ անասուն են պահում։

Մի՞թե այժմ յուրաքանչյուր չկատ թե քիչ
կուլտուրական կոլտնտեսականի համար պարզ չե, վոր
այս տարածության վրա խոտացանության անցնելու և
արօտների ու խոտհարքների բարելավման միջոցով հը-
նարավոր ե 3—4—5 անդամ ավելի անասուններ պա-
հանակ յելքը անասունների թիվը կրծատեն ե։
Լավ մտածեցեք, թե ինչ են ասում այդ կուտակյին ի-
գեռոգները։ Այսուղի մերկապարանոց նացիսնալիզմն է
հրապարակ գալիս։ Այդ «անմեղ» միտքը կուրմկները
Դիլիջանի, Շամշադենի, Զանգեզուրի շրջաններում ա-
զելի աշկարա յեն ասում։

Արօտների բարբարոս ոգտագործումը, նրանց քայ-
քայումը դրկում ե մեզ ահազին քանակությամբ մը-
սից, յուղից, պանրից և սահմաններ ե գնում անասուն-
ների քանակի հետազա աճման առաջ։ Վոչ հողգողկո-
մանը, վոչ տեղական որդանները, վոչնչից վոչինչ չեն
արել արօտները բարերից մաքրելու, մելիորացիայի
յենթարկելու, արածացման նոր ձեվերին անցնելու հա-
մար։ Միայն արածացումն, անկազմակերպ լինելու
պատճառով մեր արօտների խոտի (վոր միլիոնավոր
ցենտներ կարելի յե հաշվել) 40—50 տոկոսը փշանում
ե անասունների փոտի առակ։ Այսուղ ևս հիմնական
դժվարությունը գյուղացիական տնտեսությունների
ցրված, մանր լինելն է։ Այսուամենայնիվ, ինչքան հը-
նարավոր ե, միջոցներ պետք ե ձեռք առնենք հենց այ-
գարնանից գյուղացիության, խորհուրդների և անաս-
նապահական ընկերությունների միջոցով պայքարի հա-
նելու արօտատեղիներում հիմնական աշխատանքներ
կատարելու համար (ջրել, մաքրել և այլն) և հետզհետե

36
ГА 2/84

60--

91127 7 400



В. Аниани

По большевистски разрешить
проблему мяса

«Ազգային գրադարան



NL0208506

31.056